ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

10 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՉԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2026 թվականի հուլիսի 10-ին ժամը 18:15-ին հրավիրված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու արտահերթ դռնբաց նիստին մասնակցելու համար մինչև ժամը 18:45-ը ավագանու քսանմեկ անդամներից ներկայացել էին միայն հինգը՝ Դավիթ Հարությունյանը, Վարդան Ավագյանը, Արշավիր Բայաթյանը, Ռոմիկ Վարդանյանը և Աստղիկ Բաբայանը:

Նիստին մասնակցելու համար հրավիրվել էին՝

Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համայնքի ավագանու օրենքով սահմանված թվի (21) կեսից ավելիի բացակայության պատճառով նիստն իրավազոր չէ. արձանագրվում է, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 10-ի թիվ 9 արտահերթ նիստը համարվում է չկայացած:

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

Դավիթ Հարությունյան _____
Վարդան Ավագյան _____
Արշավիր Բայաթյան _____
Ռոմիկ Վարդանյան _____
Աստղիկ Բաբայան _____

Արձանագրությունը կազմեց՝
Աշխատակազմի քարտուղար Մարինե Հովհաննիսյանը _____